## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

## 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

<<04>> փետրվարի 2021թ.

ք. Երևան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011012599<br>ՀՎՀՀ 02565827 | <<Արման-Թաման>> ՍՊԸ<br>ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ<br><<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ<br>Հ/Հ 11500844540100<br>ՀՎՀՀ 08417115 |
| Գլխավոր քարտուղար՝<br>------------------------ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | Տնօրեն՝<br>------------------------ Մ. Մովսիսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված
28.04.2017թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի
04.02.2021թ. կնքված N 7 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | - | - | - | - | 909 500 | 909 500 | 909 500 | 909 500 | 909 500 | 909 500 | 909 500 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

---------------------- Մ. Մովսիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.